ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2014 թվականի փետրվարի 4-ի թիվ 3 որոշմամբ հրապարակվում է

"Գնումների մասին" ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14

Պատվիրատուն՝ <ՀՀ դատական դեպարտամենտ> ՊԿՀ-ն, որը գտնվում է ք.Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14 ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ պարզաբանումը:

Հարցադրում:	Թարգմանության ծառայությունների գնման նպատակով հայտարարված մրցույթի տեխնիկական բնութագրում որպես լրացուցիչ պահանջ նշված է "Դատական նիստերի ընթացքում կատարվող, ինչպես նաև դատական ակտերի և դատական հանձնարարությունների, մեղադրական եզրակացությունների, մինչդատական վարույթների թարգմանությունները պետք է կատարվեն որակավորում ունեցող թարգմանիչների կողմից: Թարգմանիչների որակավորումը հավաստող փաստաթղթերը կցվում են յուրաքանչյուր թարգմանչական գործին": Հարցը հետևյալն է. տվյալ դեպքում ի՞նչ է ենթադրում "որակավորում" ասվածը և որակավորումը հավաստող կոնկրետ ի՞նչ փաստաթուղթ ենք ի նկատի ունեցել:
Հարցադրման ստացման ամսաթիվ:	01 փետրվարի 2014թ.:
Պարզաբանում:	Որակավորումը ենթադրում է համապատասխան մասնագիտական որակավորում՝ ԲՈՒՀ-ի կողմից տրված դիպլոմ կամ ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված համապատասխան որակավորումը հավաստող լիցենզիա:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գրիգոր Ներսիսյանին:

Հեռախոս՝ 010-511-788:

Էլ. փոստ՝ datgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ <ՀՀ դատական դեպարտամենտ> ՊԿՀ: